ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«18» ապրիլ 2015թ. № 936 – Ա

ՍԵԶՈՆԱՅԻՆ ԳՐԻՊԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 46-Ն՝ «2010-2015 թվականների իմունականխարգելման ազգային ծրագիրը, իմունականխարգելման առաջնահերթ միջոցառումների ցանկը, իմունականխարգելման աշխատանքները համակարգող հանրապետական հանձնաժողովի կազմը, պատվաստումների ազգային օրացույցը, պատվաստման կամ կանխարգելման միջազգային վկայականի ձևը և իմունականխարգելման ազգային ծրագրի խնդիրները և ակնկալվող արդյունքները հաստատելու մասին» որոշման Հավելված 2-ի 6-րդ բաժնի Ռազմավարություն 4-ը, Հայաստանի Հանրապետությունում գրիպի և սուր շնչառական վարակների դեմ միջոցառումներն արդյունավետ իրականացնելու համար սեզոնային գրիպի դեմ կանխարգելիչ պատվաստումներ կատարելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) «Սեզոնային գրիպի դեմ կանխարգելիչ պատվաստումների ենթակա քանակակազմերի ցանկը»՝ համաձայն հավելված 1-ի:

2) «Սեզոնային գրիպի պատվաստանյութի բաշխման ցանկն՝ ըստ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մարզային մասնաճյուղերի և ԲՕՍԻԿ-ների»՝ համաձայն հավելված 2-ի:

3) «Սեզոնային գրիպի պատվաստանյութի բաշխման ցանկն՝ ըստ Երևան քաղաքի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների»՝ համաձայն հավելված 3-ի:

4) «Ամենօրյա տեղեկատվություն գրիպի պատվաստումների և հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի (ՀԱԴ) վերաբերյալ» աղյուսակը՝ համաձայն հավելված 4-ի:

5) «Սեզոնային գրիպի Ինֆլուվակ (INFLUVAC®) ինակտիվացված պատվաստանյութի և պատվաստումների վերաբերյալ հրահանգը»՝ համաձայն հավելված 5-ի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրեն Արտավազդ Վանյանին, գլխավոր տնօրենի խորհրդական Իմունականխարգելման ազգային ծրագրի ղեկավար Գայանե Սահակյանին ՝ սահմանված կարգով.

1) Ապահովել պահեստավորված 990 դեղաչափ սեզոնային գրիպի պատվաստանյութի բաշխումը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին (այսուհետև՝ ԲՕևՍԻԿ)՝ համաձայն հավելված 2-ի և հավելված 3-ի:

2) Կցագրել մարզերում և Երևան քաղաքում հավելված 1-ում թվարկված պատվաստման ենթակա ռիսկի խմբեր ունեցող կազմակերպությունները հավելված 2-ում և հավելված 3-ում նշված ԲՕևՍԻԿ-ներին՝ ըստ սպասարկման տարածքի:

3) Իրականացնել ամենօրյա մոնիթորինգ ԲՕևՍԻԿ-ների կողմից իրականացվող գրիպի դեմ կանխարգելիչ պատվաստումների գործընթացի նկատմամբ, ամփոփել և ներկայացնել սեզոնային գրիպի դեմ պատվաստումների և անբարեհաջող դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն հավելված 4-ի:

4) Ապահովել բնակչության շրջանում սեզոնային գրիպի և սուր շնչառական վարակների, ինչպես նաև սեզոնային գրիպի դեմ պատվաստումների վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքները:

3. Առաջարկել Երևանի քաղաքապետարանի առողջապահության, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետերին, բժշկական օգնություն և սպասարկում

իրականացնող կազմակերպությունների տնօրեններին (համաձայնությամբ)՝ սահմանված կարգով.

1) Կազմակերպել և իրականացնել Հայաստանի Հանրապետությունում կամավորության սկզբունքով պետական պատվերի շրջանակներում գրիպի դեմ պատվաստումներ սույն թվականի ապրիլի 20-ից մինչև մայիսի 15-ը ռիսկի խմբերի շրջանում՝ մանկատների սաներ (3 տարեկանից բարձր) և սպասարկող անձնակազմ, դպրոց ինտերնատների աշակերտներ և սպասարկող անձնակազմ, գիշերօթիկ մանկապարտեզների սաներ (3 տարեկանից բարձր) և սպասարկող անձնակազմ:

2) Ապահովել ռիսկի խումբ ունեցող կազմակերպություններում սեզոնային գրիպի դեմ արտագնա պատվաստումների կազմակերպումը և իրականացումը:

3) Ապահովել ռիսկի խմբերի շրջանում կատարված պատվաստումների ու արձանագրված հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի վերաբերյալ ամենօրյա, ինչպես նաև մինչև 2015 թվականի մայիսի 18-ն ամփոփ տեղեկատվության ներկայացումը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերին՝ համաձայն հավելված 4-ի:

4) Ապահովել բնակչության շրջանում գրիպի և սուր շնչառական վարակների, ինչպես նաև գրիպի դեմ պատվաստումների վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքները:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Սերգեյ Խաչատրյանին:

Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված 1

ՀՀ առողջապահության նախարարի

2015 թվականի ապրիլի 18-ի N 936 - Ա հրամանի

Ց Ա Ն Կ

ՍԵԶՈՆԱՅԻՆ ԳՐԻՊԻ ԴԵՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԵՆԹԱԿԱ ՔԱՆԱԿԱԿԱԶՄԵՐԻ

ՀՀ	Կազմակերպության անվանում	Գիշերօթիկ դպրոց-ինտերնատների սաների թիվ	Նրանցից սեզոնային գրիպի դեմ չպատվաստվածների թիվ	Գիշերօթիկ դպրոց-ինտերնատների սպասարկող անձնակազմի թիվ	Նրանցից սեզոնային գրիպի դեմ չպատվաստվածների թիվ	Մանկատների սաների թիվ	Նրանցից սեզոնային գրիպի դեմ չպատվաստվածների թիվ	Մանկատների սպասարկող անձնակազմի թիվ	Նրանցից սեզոնային գրիպի դեմ չպատվաստվածների թիվ	Գիշերօթիկ մանկապարտեզների սաների թիվ	Նրանցից սեզոնային գրիպի դեմ չպատվաստվածների թիվ	Գիշերօթիկ մանկապարտեզների սպասարկող անձնակազմի թիվ	Նրանցից սեզոնային գրիպի դեմ չպատվաստվածների թիվ	Ընդամենը նպատակային քանակակազմ	Նրանցից սեզոնային գրիպի դեմ չպատվաստվածների թիվ
1	ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Արագածոտն» մասնաճյուղ	44	0	56	0	0	0	0	0	0	0	0	0	100	0
1)	Ք. Աշտարակ N1 հատուկ գիշերօթիկ դպրոց ՊՈԱԿ	44	0	56	0	0	0	0	0	0	0	0	0	100	0
2	ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Արարատ» մասնաճյուղ	0	0	0	0	210	12	236	224	0	0	0	0	446	236
1)	«Նոր-Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ					210	12	236	224					446	236
3	ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Արմավիր» մասնաճյուղ	200	87	100	13	0	0	0	0	0	0	0	0	300	100
1)	Վաղարշապատի թիվ 2 հատուկ օժանդակ դպրոց ՊՈԱԿ	110	50	60	13									170	63
2)	Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ օժանդակ դպրոց ՊՈԱԿ	90	37	40	0									130	37
4	ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Գեղարքունիք» մասնաճյուղ	60	42	24	0	72	24	50	12	0	0	0	0	206	78

1)	Գավառի մանկատուն					72	24	50	12					122	36
2)	Գավառի հատուկ դպրոց	60	42	24	0									84	42
5	ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Կոտայք» մասնաճյուղ	62	0	72	20	0	0	0	0	0	0	0	0	134	20
1)	բ. Բյուրեղավանի երեխաների խնամքի կենտրոն	62	0	72	20									134	20
6	ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Լոռի» մասնաճյուղ	270	270	213	144	83	19	45	0	0	0	0	0	611	433
1)	Վանաձորի Մանկատուն					83	19	45	0					128	19
2)	Վանաձորի գիշերօթիկ դպրոց	113	113	69	0									182	113
3)	Վանաձորի հատուկ դպրոց	61	61	40	40									101	101
4)	Սպիտակի թիվ 1 հատուկ դպրոց	91	91	50	50									141	141
5)	Ստեփանավանի բժշկ.-հոգեբան-մանկավարժ.գնահատման կենտրոն	5	5	54	54									59	59
7	ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Շիրակ» մասնաճյուղ	196	43	138	50	333	195	175	33	0	0	0	0	842	321
1)	«Թոչունյան տուն» մանկատուն					115	74	47	2					162	76
2)	Գյումրու «Հույս» մանկատուն					89	41	60	23					149	64
3)	Գյումրու «Երեխաների տուն» մանկատուն					129	80	68	8					197	88
4)	Գյումրու թիվ 3 հատուկ դպրոց	72	0	53	0									125	0
5)	Գյումրու Երեխաների խնամքի կենտրոն	71	43	36	4									107	47
6)	Արթիկի թիվ 1 հատուկ դպրոց	53	0	49	46									102	46
8	ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Սյունիք» մասնաճյուղ	199	135	335	298	0	0	0	0	0	0	0	0	534	433
1)	Կապանի թիվ 2 հատուկ	20	10	43	23									63	33

	գիշերօթիկ դպրոց														
2)	Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր	98	66	170	153									268	219
3)	Գորիսի թիվ 1 հատուկ նշանակության դպրոց	68	59	68	68									136	127
4)	Միսիանի թիվ 1 հատուկ դպրոց	13	0	54	54									67	54
9	ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Կայծ Հոր» մասնաճյուղ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
10	ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Տալուշ» մասնաճյուղ	120	120	93	93	86	86	51	51	0	0	0	0	350	350
1)	Երեխաների խնամքի և պաշտպանության Դիլիջանի գիշերօթիկ հաստատություն	120	120	93	93									213	213
2)	Իջևանի ՍՈՄ մանկական գյուղ մանկատուն					86	86	51	51					137	137
11	ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Թիվ 1 մասնաճյուղ»	362	344	359	310	67	67	80	0	0	0	0	0	868	721
1)	Թ.2 հատուկ դպրոց	104	104	54	29									158	133
2)	Թ.15 հատուկ դպրոց	133	133	107	97									240	230
3)	Թ.12 հատուկ դպրոց	70	60	67	64									137	124
4)	Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն	55	47	131	120									186	167
5)	Նորքի «Մանկան տուն»					67	67	80	0					147	67
12	ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Թիվ 2 մասնաճյուղ»	213	21	220	192	0	0	0	0	80	14	4	0	517	227
1)	թիվ 141 գիշերօթիկ մանկապարտեզ									80	14	4		84	14
2)	թիվ 1 հատուկ կրթահամալիր	74	12	70	62									144	74
3)	թիվ 11 հատուկ օժանդակ դպրոց	69	4	80	70									149	74
4)	թիվ 2 գիշերօթիկ դպրոց	70	5	70	60									140	65
13	ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Թիվ 3 մասնաճյուղ»	210	165	70	15	0	0	0	0	224	224	16	16	520	420
1)	Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիր ՊՈԱԿ	210	165	70	15									280	180

2)	Թիվ 91 ՆՈՒՀ Գիշերօթիկ մանկապարտեզ									224	224	16	16	240	240
14	22 ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Թիվ4 մասնաճյուղ»	363	276	290	236	97	43	84	5	0	0	0	0	834	560
1)	Մարի Իզմիրլիանի անվան մանկատուն					97	43	84	5					181	48
2)	Թիվ 6 օժանդակ դպրոց	75	75	58	58									133	133
3)	Թույլ տեսնողների թիվ 16 հատուկ դպրոց	100	68	50	22									150	90
4)	Թիվ 17 հենաշարժական ապարատի խանգարումների հատուկ դպրոց	55	0	40	16									95	16
5)	Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 դպրոց	49	49	60	60									109	109
6)	Երևանի թույլ տեսնողների թիվ 14 դպրոց	84	84	82	80									166	164
	Ընդամենը	**2299**	**1503**	**1970**	**1371**	**948**	**446**	**721**	**325**	**304**	**238**	**20**	**16**	**6262**	**3899**

Հավելված 2

ՀՀ առողջապահության նախարարի

2015 թվականի ապրիլի 18-ի N 936 - Ա հրամանի

Ց Ա Ն Կ

ՍԵՋՈՆԱՅԻՆ ԳՐԻՊԻ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԲԱՇԽՄԱՆ՝ ԸՍՏ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ԲՕՍԻԿ-ՆԵՐԻ

	ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-ի մարզային մասնաճյուղեր	Դեղա չափ	ԲՕՍԻԿ_ի անվանում	Դեղա չափ	Կազմակերպության անվանում	Դեղա չափ
1	«Արարատ»	60	«Նոր Խարբերդի ԱԱՊԿ» ՓԲԸ	60	«Նոր Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ	60
2	«Արմավիր»	25	«Վաղարշապատի պոլիկլինիկա» ՓԲԸ	16	«Վաղարշապատի թիվ 2 հատուկ օժանդակ դպրոց» ՊՈԱԿ	16
			«Արմավիրի ԲԿ» ՓԲԸ	9	«Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ օժանդակ դպրոց» ՊՈԱԿ	9
3	«Գեղարքունիք»	20	«Գավառի ԲԿ» ՓԲԸ	20	«Գավառի մանկատուն»	9
					«Գավառի հատուկ դպրոց»	11
4	«Լոռի»	110	«Վանաձորի թիվ 5» ՊՓԲԸ	60	«Վանաձորի Մանկատուն»	5
					«Վանաձորի գիշերօթիկ դպրոց»	29
					«Վանաձորի հատուկ դպրոց»	26
			«Սպիտակի ԲԿ» ՓԲԸ	35	«Սպիտակի թիվ 1 հատուկ դպրոց»	35
			«Ստեփանավանի ԲԿ» ՓԲԸ	15	«Ստեփանավանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն»	15
5	«Կոտայք»	5	«Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՊՓԲԸ	5	«Ք. Բյուրեղավանի երեխաների խնամքի կենտրոն»	5
6	«Շիրակ»	79	«Բեռլին» պոլիկլինիկա ՓԲԸ	19	«Թռչունյան տուն» մանկատուն	19
			«Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ	16	Գյումրու «Հույս» մանկատուն	16
			Գյումրու «Երեխաների տուն» մանկատուն	22	Գյումրու «Երեխաների տուն» մանկատուն	22
			«Գյումրու Միջազգային կարմիր խաչի անվան	11	Գյումրու «Երեխաների խնամքի կենտրոն»	11

			պոլիկլինիկա»ՓԲԸ			
			«Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ	11	«Արթիկի թիվ 1 հատուկ դպրոց»	11
7	«Սյունիք»	111	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	67	«Կապանի թիվ 2 հատուկ գիշերօթիկ դպրոց»	9
					«Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր»	56
			«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	34	«Գորիսի թիվ 1 հատուկ նշանակության դպրոց»	32
			«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	14	«Սիսիանի թիվ 1 հատուկ դպրոց»	14
8	«Տավուշ»	90	«Դիլիջանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	57	«Երեխաների խնամքի և պաշտպանության Դիլիջանի գիշերօթիկ հաստատություն»	54
			«Իջևանի ԱԱՊԿ» ՓԲԸ	36	«Իջևանի ՍՈՍ մանկական գյուղ մանկատուն»	36
	ԸՆԴԱՄԵՆԸ	500	ԸՆԴԱՄԵՆԸ	500	ԸՆԴԱՄԵՆԸ	500

Հավելված 3

ՀՀ առողջապահության նախարարի

2015 թվականի ապրիլի 18-ի N 936 – Ա հրամանի

Ց Ա Ն Կ

ՍԵՋՈՆԱՅԻՆ ԳՐԻՊԻ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԲԱՇԽՄԱՆ ԸՍՏ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	ք. Երևանի ԲՕԼՍԻԿ	ԲՕՍԻԿ /դեղաչափ	Կազմակերպություն	Կցագրված կազմակերպություն /դեղաչափ
	«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ	74	Թիվ 12 հատուկ դպրոց	30
			Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն	44
	«Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ	109	Թիվ 2 հատուկ դպրոց	33
			Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ	17
			Թիվ 15 հատուկ դպրոց	59
	«Նուբարաշեն պոլիկլինիկա» ՓԲԸ	37	Թիվ 11 հատուկ օժանդակ դպրոց	20
			Թիվ 2 գիշերօթիկ դպրոց	17
	«Նոր Արեշ պոլիկլինիկա» ՓԲԸ	20	Թիվ 1 հատուկ կրթահամալիր	20
	«Արշակունյաց պոլիկլինիկա» ՓԲԸ	4	Թիվ 141 գիշերօթիկ մանկապարտեզ	4
	«Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ	107	Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիր ՊՈԱԿ	46
			Թիվ 91 ՆՈՒՀ Գիշերօթիկ մանկապարտեզ	61
	«Արաբկիր» մանկ. պոլիկլինիկա ՓԲԸ	41	Երևանի թույլ տեսնողների թիվ 14 դպրոց	41
	«Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ	39	Մարի Իզմիրլիանի անվան մանկատուն	12
			Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 դպրոց	27
	«Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ	55	Թիվ 6 օժանդակ դպրոց	32
			Թույլ տեսնողների թիվ 16 հատուկ դպրոց	23
	«Ս.Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ	4	Հենաշարժական ապարատի խանգարումների թիվ 17 հատուկ դպրոց	4
	Ընդամենը	**490**		**490**

ՀՀ առողջապահության նախարարի
2015 թվականի մարտի 18-ի N 936 - Ա հրամանի
Հավելված 4

ԱՄԵՆՈՅՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՐՈՒՊ ՊԱՏԿԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԵՏՈՒԱՏԿԱՍՏՈՒՄՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՎՈՂ ԴԵՊՔԵՐԻ (ՀՍԴ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՍԴ-ների անվանումը				
Սպասարկվող դեպքերի քանակը				
Սեպսիս				
Բակտերիալ օդային և տարածքային դոմեհսհսմգիոբեռի նաղցոդոիմով բուսիմոռոհո դոմեհսհսդեռ դոիոիշԲԺ ադեսդ				
Ազդող վնազտոզմգտղվ-ճսմԿ				
Իվժ վնազրստոռիտոռ գոիմոտոդ				
Նսիմոռոհո վնազտոզմգտղվ-ճսմԿ բեռիոզդոռ				
Իվժ վնազրստոռիտոռ գոիմոտոդ				
Ազդող վնազտոիդոռ				
Իվժ վնազրստոռիտոռ գոիմոտոդ				
բեռիոզդոռ նսիմոռոհո վնազտոիդոռ				
Իվժ վնազրստոռիտոռ գոիմոտոդ				
Իվժ վնազո վնազեգտմոհոիդոռ իվժեօմգՇվեգ				
Իվժ վնազրստոռիտոռ գոիմոտոդ				
բեռիոզդոռ նսիմոռոհո վնազեգտմոհոիդոռ իվժեօմգՇվեգ				
Իվժ վնազրստոռիտոռ գոիմոտոդ				
ԸՈՒՄՈՏՈՒ ՀՅԳԱՐՈՒՆՈՒՅ				
ՈՒՈՁՍՂԳ ՀՅԳԱՐՈՒՆՈՒՅ				
ԲՈՒՄՈՏՈՒ ՀՅԳԱՐՈՒՆՈՒՅ				
Օգոմոնգն վեհսնզոտոռիտոռ գոիգմսեռտեՕ				
ԵՈՀ ՀՅԳԱՐՈՒՆՈՒՅ				
դվմոնգտ բուսիթ նմ				
մոդոպնզՇ բուսիթ նմ				
Ընդամենը				

Հավելված 5

ՀՀ առողջապահության նախարարի

2015 թվականի ապրիլի 18-ի N 936 – Ա հրամանի

ՀՐԱՀԱՆԳ

Սեզոնային գրիպի Ինֆլուվակ (INFLUVAC®) ինակտիվացված պատվաստանյութի և պատվաստումների վերաբերյալ

Դեղորայքի ձևը

Կախույթ՝ միջմկանային և ենթամաշկային ներարկումների համար:

Բաղադրությունը

INFLUVAC® գրիպի եռավալենտ ինակտիվացված պատվաստանյութ է՝ կազմված մակերեսային հակածիններց (հեմագլյուտինին, նեյրամինիդազա):

Պատվաստանյութի 1 դեղաչափը (0.5 մլ), պարունակում է հեմագլյուտինին և նեյրամինիդազա գրիպի վրուսի հետևյալ շտամերի՝

(A/California/7/2009 Reassortant virus NYMC X-181 (H1N1))	15 μգ
Ա տիպի գրիպի վիրուսի մաքրված ինակտիվացված	
(A/Texas/50/2012 Reassortant virus NYMC X-223A (H3N2))	15 μգ
Բ տիպի գրիպի վիրուսի մաքրված ինակտիվացված	
(B/Massachusetts/02/2012 Reassortant virus NYMC BX-51B)	15 μգ

Գրիպի պատվաստանյութի հակածինային բաղադրությունը յուրաքանչյուր տարի նորացվում է համաձայն ԱՀԿ-ի առաջարկների:

Օժանդակ նյութեր

Կալիումի քլորիդ՝ 0.1 մգ, կալիումի հիդրոֆոսֆատ՝ 0.1 մգ, նատրիումի ֆոսֆատի դեհիդրատ՝ 0.67 մգ, նատրիումի քլորիդ՝ 4.0 մգ, կալցիումի քլորիդի դեհիդրատ՝ 0.067 մգ, մագնեզիումի քլորիդի հեքսահիդրատ՝ 0.05 մգ, ջուր՝ ներարկման համար, նատրիումի ցիտրատ <1.0 մգ, սախարաոզա <0.2 մգ, ֆորմալդեհիդ <0.01մգ, պոլիսորբատ-80՝ հետքեր:

Նկարագրություն

Անգույն թափանցիկ հեղուկ:

Իմունոլոգիական բնութագիրը

Պատվաստանյութը ձևավորում է սպեցիֆիկ անընկալություն գրիպի Ա և Բ տիպի վիրուսների նկատմամբ, որը ձևավորվում է որպես կանոն պատվաստումից 14 օր հետո և տևում է մինչև 1 տարի:

Ցուցումներ

Կիրառվում է մեծահասակների և 6 ամսականից բարձր տարիքի երեխաների գրիպի կանխարգելման համար:

Գրիպի պատվաստումները առաջարկվում է բոլոր անձանց, հատկապես բնակչության հետևյալ խմբերին՝

- 65 տարեկանից բարձր տարիքի անձիք
- Շնչառական համակարգի հիվանդություններով, այդ թվում բրոնխիալ ասթմայով տառապող անձիք
- Սիրտ-անոթային համակարգի հիվանդություններով տառապող անձիք
- Նյութափոխանակության խրոնիկ խանգարումներով, շաքարային դիաբեթով անձիք
- Իմունային անբավարարությամբ հիվանդներ, ինչպես նաև իմունադեպրեսանտներ, ցիտոստատիկներ, քիմիոթերապիա և ճառագայթային բուժում ստացող անձիք
- 6 ամսականից մինչև 18 տարեկան երեխաներ, որոնք երկարատև ստացել են ացետիլսալիցիլաթթու պարունակող պրեպարատներ, հետևաբար գրպի վարակի դեպքում կարող է զարգանալ Ռեյի համախտանիշ

Հակացուցումներ

1) Գերզգայունություն INFLUVAC® պատվաստանյութի որևէ բաղադրիչների՝ հավի սպիտակուցի, ֆորմալդեհիդի, պոլիսորբատ-80-ի և գենտամիցինի նկատմամբ
2) Մինչև 6 ամսական երեխաներ
3) Պատվաստվողի մոտ սուր հիվանդություններ կամ քրոնիկ հիվանդությունների սրացման շրջան:

Դեղաչափ և կիրառում

Ներարկվում է՝ հետևյալ դեղաչափերով.

1) 14 տարեկանից բարձր տարիքի անձիք՝ 0.5 մլ, պատվաստանյութը ներարկվում է միանվագ
2) 3-14 տարեկան երեխաներ՝ 0.5 մլ, 6 ամսականից 3 տարեկան երեխաներ՝ 0.25մլ, պատվաստանյութը ներարկվում է միանվագ: Այն երեխաները, ովքեր նախկինում պատվաստում չեն ստացել առաջարկվում է երկնվագ պատվաստում՝ առնվազն 4 շաբաթ ընդմիջումով:

Պատվաստանյութը ներարկվում է միջմկանային կամ խորը ենթամաշկային: **Խստիվ արգելվում է պատվաստանյութը ներարկել ներերակային:** Մինչև ներարկումը պատվաստանյութը պետք է բերվի սենյակային ջերմաստիճանի: Թափահարել ներարկիչը և համոզվել, որ ներարկումից անմիջապես առաջ չկան օտար մարմիններ:

Օգտագործում հղիության ընթացքում

Հղիների շրջանում գրիպի պատվաստումների օգտագործման փորձը սահմանափակ է: Այնուամենայնիվ եղած փորձը վկայում է, որ INFLUVAC® չի թողնում տերատոգեն կամ տոքսիկ ազդեցություն պտղի վրա: INFLUVAC® պատվաստանյութը կարելի է կիրառել հղիության 2-րդ տրիմեստրից սկսած: Ռիսկի խմբին պատկանող հղիները պատվաստվում են՝ անկախ հղիության ժամկետից: INFLUVAC® պատվաստանյութը կարելի է օգտագործել լակտացիայի շրջանում:

Հետպատվաստումային անբարեհաջող դեպքեր

Կլինիկական հետազոտությունների ընթացքում հաճախ արձանագրվել են հետևյալ կողմնակի երևույթները.

Նյարդային համակարգ՝ գլխացավ

Մաշկ և ենթամաշկային բջջանք՝ քրտնարտադրություն

Հենաշարժիչ համակարգ՝ միալգիա, արթրալգիա

Ընդհանուր երևույթներ՝ ջերմության բարձրացում, ընդհանուր թուլություն, դող, հոգնածություն

Տեղային երևույթներ՝ կարմրություն, այտուց, ցավոտություն

Երևույթները սովորաբար անցնում են 1-2 օրվա ընթացքում և չեն պահանջում բուժում:

Հետմարքետինգային հետազոտության ընթացքում դիտվել են հետևյալ երևույթները.

Արյունատար և ավշային համակարգ՝ անցողիկ թրոմբոցիտոպենիա, անցողիկ լիմֆադենոպաթիա

Իմուն համակարգ՝ ալերգիկ երևույթներ, հազվադեպ հնարավոր է անաֆիլաքտիկ շոկ, անգիոնեվրոտիկ այտուց

Նյարդային համակարգ՝ նևրալգիա, պարեսթեզիա, ֆեբրիլ ցնցումներ, էնցեֆալոմիելիտ, նևրիտ, Գիեն-Բարեի համախտանիշ

Անոթային համակարգ՝ վասկուլիտ, շատ հազվադեպ դեպքերում երիկամների գործունեության խանգարում

Մաշկ և ենթամաշկային բջջանք՝գեներալիզացված մաշկային երևույթներ, այդ թվում քոր, եղնջացան կամ ցան:

Նախազգուշական միջոցներ

Պատվաստումային կետը պետք է ապահովված լինի անաֆիլաքտիկ շոկի բուժման համար անհրաժեշտ դեղորայքով:

1 դեղաչափը չպետք է պարունակի 0,1 մկգ ավել օվալբումին:

Նույն ներարկչի մեջ չի կարելի խառնել տարբեր պատվաստանյութեր կամ այլ դեղորայք:

Պահպանման պայմաններ

Պահել +2°- +8°C ջերմաստիճանի պայմաններում, պաշտպանել լույսի ազդեցությունից: Չսառեցնել:

Պիտանելիության ժամկետը՝ արտադրության օրից 12 ամիս տևողությամբ: